«ԴԱ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ ՉԷ»

Գտնում է Ադրբեջանի ժողովրդական ճակատի վարչության անդամ ԼԵՑԼԱ ՑՈՒՆՈՒՍՈՎԱՆ, որը պատասխանեց «ՄՆ»-ի թղթակցի հարցերին

«ՄՆ».— Հենց նոր ավարտվեց Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը: Կարելի՞ է նրա որոշումներն առաջադեմ համարել այսօրվա բարդ իրավիճակում:

— *Մեր տեսանկյունից՝ այս Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց լուծարքի ենթարկել ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն՝ դրանով իսկ կատարելով ժողովրդական ճակատի գլխավոր պահանջներից մեկը։ Իսկ կենսականորեն կարևոր խնդիրներից նստաշրջանը շեղելու փորձերը չհաջողվեցին։ Եղավ մի պահ, երբ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովը դատախազին հրամայեց ձերբակալել դահլիճում ներկա գտնվող Աժճ-ի վարչության անդամներին։ Բոլոր ձեռնարկությունները, որտեղ դիտում էին ուղիղ հաղորդումը, անմիջապես գործադուլ սկսեցին։ Եվ նստաշրջանը հարկադրված եղավ կատարել մեր մեկ պահանջը նույնպես. սուվերենության մասին օրենքի նախագիծը հրապարակել համաժողովրդական քննարկման համար։ Սեպտեմբերի 23-ին այդ օրենքն ընդունվեց։ Այժմ ԽՍՀՄ կառավարության որոշումները Ադրբեջանի տարածքում կգործեն միայն հանրապետության Գերագույն խորհրդի հաստատելուց հետո։*

«ՄՆ».— Ինչպե՞ս կանդրադառնան Ադրբեջանի նոր օրենքները Լեռնային Ղարաբաղի բնակիչների վրա:

— *Նրանք, ում այդ օրենքները ձեռնտու չեն, կարող են մեկնել Հայաստան։ Նրանց տեղում մենք կվերաբնակեցնենք մեր անօթևան փախստականներին։*

«ՄՆ».— Նստաշրջանում քննարկվե՞ց, արդյոք, Հայաստանի շրջափակման հարցը:

— *Երկաթուղային ներքի գործադուլի որոշումն ընդունել է ժողովրդական ճակատը և ոչ թե Գերագույն խորհուրդը։ Դրա ընդհատման մեր պայմանները մընում են ուժի մեջ. ամենից առաջ Հայաստանը պետք է հրաժարվի Լեռնային Ղարաբաղի հանդեպ տարածքային հավակնություններից։ Ընդհանրապես, ես գտնում եմ, որ դա շրջափակում անվանել չի կարելի։ Պարզապես մենք դադարեցրինք Հայաստանին տալ այն, ինչը նախկինում տալիս էինք անվճար՝ մեր նավթը և մեր մթերքները...*

***

Ինչպես խմբագրությանը հաղորդեցին Հայկական ԽՍՀ պետմատում, հարյուր հազար տոննա բեռներից, որոնք ամեն օր (մինչև շրջափակումը) Հայաստանը ստանում էր ադրբեջանական երկաթուղով, ապրանքների միայն 3—4 տոկոսն են ադրբեջանական արտադրության։

«Մոսկովսկիե նովոստի», № 40, 1 հոկտեմբերի 1989 թ.